

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշոտ Եղիազարյան՝

1990-ական թվականների սկզբներին միջազգային փորձագետների շրջանում գերիշխող էր այն կարծիքը, որի համաձայն՝ բոլոր զարգացող երկրներն իրենց ինստիտուտները պետք է վերակառուցեն, իսկ տնտեսական վերափոխումներն իրականացնեն Վաշինգտոնյան կոնսենսուսի շրջանակներում Լատինական Ամերիկայի, Աֆրիկայի, Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրներին առաջարկվող միևնույն (կամ այլ կերպ ասած՝ ունիվերսալ) դեդատումների համաձայն՝ մասնավորեցում, առևտրի ազատականացում, կապիտալի շուկաների ապակարգավորում, հրաժարում արդյունաբերական քաղաքականությունից¹: Հետագայում մի շարք հետազոտողներ ցույց տվեցին, որ վիճակագրական տվյալների մանրամասն վերլուծությունը չի հաստատում տնտեսական աճի վրա առևտրի ազատականացման դրական ազդեցության մասին հիպոթեզը, իսկ մասնավորեցումը չի հանգեցնում վերակառուցման և արդյունավե-

¹ ՀՊՏՀ դոցենտ, տ.գ.թ.:

¹ 1990թ. հուլիսին Հյուսթոնի գազաթաժողովում հավաքված աշխարհի յոթ զարգացած երկրների ղեկավարները ԱՄՆ-ի, միջազգային ֆինանսական այլ կազմակերպությունների (Համաշխարհային բանկ, ՏՀԶԿ, ՎԶԵԲ) հետ համատեղ, պատվիրում են իրականացնել հետազոտություն խորհրդային տնտեսության վիճակի վերաբերյալ: Այդ հետազոտությունը հրապարակվել է 1991թ. փետրվարին (*A Study of the Soviet Economy 1991*): Հենց այդ հրապարակումն էլ, ըստ էության, բովանդակել է ԽՍՀՄ-ում ազատական տնտեսական բարեփոխման առաջին ծրագիրը՝ ամբողջությամբ հիմնված մակրոտնտեսական կայունության, գնային բարեփոխման և ամբողջ տնտեսության, այդ թվում նաև արտաքին առևտրի ազատականացման հիմնարար դրույթների վրա:

տության բարձրացման, ինչը կախված է աշխատանքի շուկայի վիճակից, սոցիալական քաղաքականությունից, արտաքին ներդրողների առկայությունից և այլ գործոններից [1, 2]: Մյուս կողմից, եթե ապակարգավորումը երբեմն իսկապես նպաստում է ներդրումների աճին, ապա այլ դեպքերում հանգեցնում է կապիտալի փախուստի և ֆինանսական ճգնաժամերի [3]: Հաշվի առնելով նշված եզրահանգումները՝ որոշ մասնագետներ հակված են ենթադրելու, որ միայն վերափոխումների ամենաընդհանուր սկզբունքներն են ճիշտ [4]:

Ռացիոնալ ռազմավարությունը ենթադրում է ունիվերսալ դեդատումների բացակայություն, ինչը նշանակում է, որ եթե զարգացած երկրներում գործող ինստիտուտը կամ իրականացվող քաղաքականությունն արդյունավետ է, ապա պարտադիր չէ, որ դրանք արդյունավետ լինեն նաև զարգացող երկրներում [5]: Ըստ ունիվերսալ դեդատումների՝ տնտեսական քաղաքականության սկզբունքային քննադատությունը ներկայացվել է Վ.Պոլտերովիչի և Վ.Պոպովի կողմից [6]: Նշված հեղինակների կարծիքով, տնտեսական կառավարման ռացիոնալ ռազմավարությունը համակարգի տնտեսական, ինստիտուցիոնալ և մշակութային առանձնահատուկ պարամետրերի գործառույթն է: Տեսության կարևորագույն խնդիրն է բացահայտել, թե ինչպես պետք է փոխվի այդ ռազմավարությունը տնտեսական աճի գործընթացում: Մասնավորապես, արդյունավետ է համարվում հիպոթեզն այն մասին, որ այնպիսի միջոցները, ինչպիսին են սակագների իջեցումը, արտաբաժնային պահուստների կուտակումից հրաժարվելը, կապիտալի հոսքերի ազատականացումը, ֆինանսական շուկաների ապակարգավորումը, պետական վերահսկման թուլացումը և մրցունակության խրախուսումը, կարող են հանգեցնել տարբեր (դրական կամ բացասական) արդյունքների՝ կախված տնտեսության զարգացման մակարդակից [7]: Այսպիսով, ռացիոնալ տնտեսական քաղաքականությունն ունիվերսալ չի կարող լինել, որովհետև պետք է համապատասխանի

երկրի տնտեսական և սոցիալական զարգացման մակարդակին [8]: Այս իմաստով հատկանշական են Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Դ.Ռոդրիկի հետազոտությունները: Վերլուծելով գոյություն ունեցող փորձը՝ Դ.Ռոդրիկը զարգացող երկրներին առաջարկում է իրականացնել արդյունաբերական քաղաքականություն, չնայած դրա էվոյուցիայի հարցը նա չի քննարկում [9]:

Համաշխարհային բանկը համաշխարհային զարգացման մասին զեկույցում (*World Bank 1997*) պետական գործառույթները բաժանեց երեք կատեգորիայի՝ առանձնացնելով պետության նվազագույն, միջանկյալ և ակտիվ գործառույթները [10]: Արդյունաբերականությանը դասվում է պետության ակտիվ գործառույթներին, որոնք այն կարող է և պետք է իրականացնի կառուցվածքային ճգնաժամի ժամանակաշրջանում:

Արդյունաբերական քաղաքականության մեկնաբանությունը

Երբեմն «արդյունաբերական քաղաքականությունը» մեկնաբանվում է որպես «պետական քաղաքականություն արդյունաբերության բնագավառում» կամ «պետական աջակցություն արդյունաբերությանը»: Այդպիսի սահմանումները ենթադրում են որոշակի միջոցառումների և գործողությունների իրականացում՝ կոնկրետ պահին և կոնկրետ տարածքում արդյունաբերության իրական վիճակով պայմանավորված հիմնախնդիրների լուծման համար: Ավելի հաճախ որպես «արդյունաբերական քաղաքականության» հոմանիշ օգտագործվում է «արդյունաբերական զարգացման քաղաքականություն» հասկացությունը: Մեզանում նույնպես «արդյունաբերական քաղաքականությունը» հաճախ մեկնաբանվում է որպես արդյունաբերական զարգացման քաղաքականություն, արդյունաբերության ոլորտում պետական քաղաքականություն և այլն: Սակայն խիստ տեսական դիտանկյունից վերոնշյալ մեկնաբանությունները ճիշտ չեն:

Արդյունաբերական զարգացման քաղաքականությունը նպատակաուղղված է առավել սուր, իրականում գոյություն ունեցող և մշտապես առաջացող արդյունաբերական զարգացման ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը: Արդյունաբերության աճի խթանմանն ուղղված միջոցներն ընդհանուր առմամբ կարող են որպես ֆոն ծառայել արդյունաբերական քաղաքականության համար, բայց չեն համարվում նրա մասը: Նույնիսկ եթե ինչ-որ միջոցներ էապես ազդում են արդյունաբերության կառուցվածքի վրա, բայց հիմնված չեն որոշակի ուղղությամբ այդ կառուցվածքը փոխելու ձգտման գիտակցման վրա, ապա այդպիսի միջոցները չի կարելի համարել արդյունաբերական քաղաքականության տարր:

«Արդյունաբերական քաղաքականություն» հասկացությունը, որն անգլիալեզու գրականությունում հայտնի է որպես *«industrial policy»*, ավելի հաճախ նշանակում է պետության կողմից իրականացվող միջոցառումներ՝ տնտեսության կոնկրետ հատվածների աջակցության և զարգացման համար: Միաժամանակ, *«industrial policy»* նշանակում է ոչ միայն սեկտորային քաղաքականություն, այլև տնտեսությունը, այդ թվում արդյունաբերությունը կառուցվածքային ճգնաժամից հանելուն ուղղված պետական քաղաքականություն: Այլ կերպ ասած՝ արդյունաբերական քաղաքականությունն այն հիմնական գործիքներից մեկն է, որը տարբեր երկրներ կիրառում են ազգային տնտեսության կերպարի փոփոխության և կառուցվածքային հիմնախնդիրների լուծման համար: Կախված զարգացման մակարդակից՝ արդյունաբերական քաղաքականությունն ապահովում է կամ արդյունաբերության ձևավորված կառուցվածքի աջակցությունը, կամ նոր տիպի ճյուղային կառուցվածքի ձևավորումը [11]:

Հաճախ արդյունաբերական քաղաքականությունը դիտարկվում է լայն իմաստով և նույնացվում է կառուցվածքային քաղաքականության հետ: Հենց կառուցվածքային փոփոխությունների ժամանակա-

շրջանում է արդյունաբերական քաղաքականությունը ձեռք բերում այն կարգավիճակը, որը տրվում է նրան «*industrial policy*» հասկացությանը: Ըստ Կրուգմանի և Օբսֆելդի, արդյունաբերական քաղաքականությունը պետության ձգտումն է՝ ռեսուրսներն ուղղել տնտեսական աճի առումով հեռանկարային համարվող տնտեսության այս կամ այն ճյուղին [12]:

Ենթադրվում է, որ կառուցվածքային վերակառուցման ժամանակ արդյունաբերական քաղաքականությունը նպատակի, օբյեկտի և իրացման եղանակների տեսանկյունից համարվում է կառուցվածքային: Հետևաբար, անհրաժեշտություն չկա օգտագործել կրկնօրինակող տերմին, քանի որ կառուցվածքային քաղաքականությունը տարրալուծվում է արդյունաբերականում [13]: Իհարկե, լայն իմաստով կառուցվածքային քաղաքականությունը, բացի արդյունաբերականից, ներառում է նաև ագրարային, տրանսպորտային և այլ ուղղությունները: Այս իմաստով հարկ է նկատել, որ կառուցվածքային քաղաքականությունը երբեմն իրավացիորեն անվանում են նաև «ճյուղային քաղաքականություն», և քանի որ ավելի լավ տերմին գոյություն չունի, մենք նույնպես կօգտագործենք այդ եզրը բոլոր այն դեպքերում, երբ միայն արդյունաբերական քաղաքականություն հասկացության միջոցով հնարավոր չի լինի բնութագրել տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը:

Հարկ է նշել, որ որոշ հեղինակների կարծիքով՝ ժամանակակից պայմաններում «արդյունաբերական քաղաքականություն» տերմինն ընդհանրապես պետք չէ օգտագործել: Նրանց կարծիքով, զարգացած երկրների արդյունաբերության ճյուղերի մեծ մասը հաջողության է հասել XX դարի 70-80-ական թվականներին, իսկ այսօր, երբ ակտիվորեն ձևավորվում է նոր տեխնոլոգիական պարադիգմ, նպատակահարմար է խոսել միայն նորամուծական քաղաքականության մասին [14]: Սակայն եվրոպական երկրների փորձը խոսում է հակառակ

երևույթի մասին: Ներկայումս զգալի ուշադրություն է հատկացվում ԵՄ շրջանակներում միասնական արդյունաբերական քաղաքականության ձևավորման վրա: Պարզապես հարկ է նկատել, որ այնպիսի պայմաններում, երբ տնտեսական աճը նույնացվում է միայն գիտատեխնիկական առաջընթացի և արտադրության հիմնական ֆոնդերի մտավորականացման հետ, երբ գիտելիքների և տեղեկատվության արտադրությունը, բաշխումը և օգտագործումը կայուն տնտեսական զարգացման գլխավոր պայմաններն են, արդյունաբերական քաղաքականության կենտրոնական բաղադրիչը դառնում է նորամուծական քաղաքականությունը:

Ազատ շուկա՞, թե՞ ճյուղային քաղաքականություն

Ինչ-որ ժամանակ տնտեսագետները հավատում էին, որ զարգացող երկրներում շուկան կայացած չէ, և միայն հզոր պետական միջամտությունն է ընդունակ այդ երկրները հանել աղքատությունից: Հետո նրանք որոշեցին, որ այդ միջամտությունն ավելի մեծ չարիք է, և լավագույնը, որ կարող է անել կառավարությունը, տնտեսությունը կառավարելու ցանկացած փորձից հրաժարվելն է: Կյանքն այդ դիրքորոշումներից ոչ մեկը չարդարացրեց: Ներմուծման փոխարինումը, պլանավորումը և պետական սեփականությունը թույլ տվեցին հասնել որոշակի հաջողությունների, սակայն ժամանակի ընթացքում այդպիսի քաղաքականությունը կորցրեց ճկունությունը, կարծրացավ, այդ պատճառով էլ հանգեցրեց մեծ ցնցումների և ճգնաժամերի: Շուկաների ազատականացումը բարենպաստ կերպով անդրադարձավ արտահանման, ֆինանսական սեկտորի զարգացման և որակավորված աշխատողների վիճակի վրա, սակայն ավելի հաճախ հանգեցրեց տնտեսական աճի շատ ավելի համեստ ցուցանիշների (աշխատանքի արտադրողականության և ընդհանուր գործոնային արտադրողականության), քան անցյալի «անհաջող» քաղաքականությունը [15]:

Իսկապես, «այսօր քչերն են անկեղծ հավատում, որ պետական պլանավորումը և պետական ներդրումներն ընդունակ են դառնալ տնտեսական զարգացման շարժիչ ուժը: Նույնիսկ ձախ հոսանքի տնտեսագետները բաժանում են շուկայական ուժերի և մասնավոր նախաձեռնության մեծ նշանակության մասին ողջախոհ միտքը: Միաժամանակ, ավելի լայն աջակցություն է ստանում կարծիքն այն մասին, որ զարգացող երկրներում մասնավոր նախաձեռնությունը պետք է տեղավորվի պետական միջոցառումների համալիրում, ինչը նպաստում է վերակառուցմանը, դիվերսիֆիկացիային, տեխնոլոգիական զարգացմանն ավելի մեծ աստիճանով, քան դա տեղի կունենար ամբողջապես ազատ շուկայի պայմաններում: Հնարավոր է՝ այո, և զարմանալի չէ, որ դա առավել ակնհայտ է դառնում այն երկրներում, որտեղ շուկայական վերափոխումներն ավելի հեռուն են գնացել և դրանց արդյունքներից հիասթափությունը, համապատասխանաբար, ավելի մեծ է, հատկապես դա վերաբերում է Լատինական Ամերիկային»¹:

Այս «նոր կոնսենսուսը» ճանաչեց պետական քաղաքականության էական դերը՝ պահանջելով շուկայական մեխանիզմների լրացում պետական կարգավորմամբ: Ելնելով այս մոտեցումից՝ 1990-ական թվականների երկրորդ կեսին, մասնավորապես արևմտաեվրոպական երկրներում, ձեռնարկվեցին «երրորդ ճանապարհի» մշակման մի շարք փորձեր, ինչը ենթադրում էր պետության և մասնավոր ձեռնարկատիրության ակտիվ դերի համակցում:

Անդրադառնալով վերոնշյալ հանգամանքներին՝ Դ.Ռոդրիկը գրեց. «Լավ նորությունը... ոչ միայն այն է, որ ճոճանակը սկսել է հակառակ շարժումը, այլև այն, որ այս անգամ մենք նշանակալից հնարավորություններ ունենք կանգ առնել որոշակի ողջախոհ միջին

¹ Տե՛ս, օրինակ, *De Ferranti* և ուրիշներ, Լատինական Ամերիկայի և Գարիբյան ավազանի երկրների վերաբերյալ Համաշխարհային բանկի ստորաբաժանումների հաշվետվությունը (2002): Այդ հաշվետվությունում ճանաչվում է տարածաշրջանի տեխնոլոգիական զարգացման խթանման նպատակով որոշակի ճյուղային քաղաքականության ընդունման անհրաժեշտությունը:

դիրքի վրա, այլ ոչ թե շարունակել տատանումները հակաարգասա-
բեր ծայրահեղությունների միջև» [16]:

Ինստիտուցիոնալ դպրոցի ներկայացուցիչ Գ.Մյուրդալն իր
«Երրորդ աշխարհի ժամանակակից հիմնախնդիրները» գրքում [17]
ապացուցում է, որ պետության կողմից տնտեսական իրադարձու-
թյուններին չմիջամտելու (համաձայն Ա.Սմիթի «անտեսանելի ձեռքի»)
արդյունքը կլինի ոչ թե տնտեսության զարգացումը, այլ թույլ զարգա-
ցածության պահպանումը: Նրա համոզմամբ, զարգացումը և համա-
պատասխան արդյունքները կարող են ձեռք բերվել միայն կոնկրետ
նպատակների առաջաշման և իրագործման արդյունքում: Եթե նոր
դասականները նպատակների հարցը դիտում են տեսական վերլուծու-
թյան շրջանակներից դուրս (այդ կերպ թույլ զարգացածության իրա-
կան գործոնները դուրս են մնում հետազոտությունից), ապա ինստի-
տուցիոնալիստները վերլուծում են ոչ միայն տնտեսական նպատակ-
ներին հասնելու միջոցները, այլև հենց նպատակները: Գ.Մյուրդալն
ապացուցում է, որ նպատակները և միջոցները մեկուսացված չեն, այլ
փոխկապված են, դրանք ճշգրտվում են զարգացման ընթացքում: Նրա
համոզմամբ՝ քաղաքական նպատակները և համոզմունքները, որոնք,
ըստ դասականների, չեն ենթարկվում ուսցիոնալ վերլուծության,
տնտեսական հետազոտությունների պարտադիր տարր են:

*Այսպիսով, կարող ենք հաստատել, որ ա) պետական միջա-
մտությունը տնտեսության զարգացման հարցում կարևոր է, բ) բայց
միաժամանակ այն պետք է ունենա կառուցվածքային վերափոխման
կոնկրետ նպատակներ, և միայն այդ ժամանակ է, որ արդարացվում
է: Այլ կերպ ասած՝ պետական միջամտության գերնպատակն այնպի-
սի ճյուղային քաղաքականության մոդելի մշակումն է, որն առավել
մեծ աստիճանով կնպաստի տնտեսական զարգացում ապահովող
տնտեսության ճյուղային կառուցվածքի ձևավորմանը: Հետևաբար,
կարող ենք կատարել ևս մեկ կարևոր հաստատում. թույլ զարգացած*

երկրներում ճյուղային քաղաքականության իրականացումը պարզապես անհրաժեշտ պայման է աղքատության և տնտեսության պարզունակ, զարգացման ներուժից զուրկ կառուցվածքը վերափոխելու և դիվերսիֆիկացնելու համար:

Գոյություն ունի օրինաչափություն, որի համաձայն՝ «եկամուտների աճին զուգընթաց, աղքատ երկրներում իջնում է արտադրության և զբաղվածության ճյուղային համակենտրոնացումը», կամ որ նույնն է՝ «ճյուղային մասնագիտացման, ինչպես և տնտեսական զարգացման բարձր ցուցանիշները բնութագրական են միայն եկամտի բարձր մակարդակ ունեցող երկրներին» [18]: Ինչպես նշում է Դ.Ռոդրիկն իր «*Industrial Policy for the Twenty – First Century*» աշխատանքում, այս մոտեցումը հակասում է ավանդական այն եզրակացությանը, որը բխում է համեմատական առավելության սկզբունքից, որի հիմնական իմաստը մասնագիտացման գաղափարն է: Համեմատական առավելության տեսության համաձայն՝ հենց մասնագիտացման արդյունքում է բարձրանում առևտրի համար բաց տնտեսության ընդհանուր արտադրողականությունը [19]: Այս տեսության կողմնակիցները զարգացման ցածր մակարդակը հաճախ բացատրում են միջազգային առևտրում երկրի ոչ բավարար մասնակցությամբ և փաստորեն այդ կերպ անուղղակի հաստատում են, որ տնտեսական զարգացման հիմքը մասնագիտացումն է: Ըստ Դ.Ռոդրիկի, տնտեսական զարգացումը որոշող մեխանիզմը պարտադիր չէ, որ հիմնվի համեմատական առավելության սկզբունքի վրա: Գլխավոր խնդիրը ոչ թե միակ, թեկուզև առավել հաջող գործունեությամբ սահմանափակվելն է, այլ դրա փոխարեն գործունեության տեսակների ավելի լայն սպեկտրի յուրացումը: Այս տեսակետը հաստատվում է Բ.Քլինգերի և Դ.Լեդերմանի կողմից իրականացված արտահանման տվյալների դետալային վերլուծությամբ [20]:

Ազատ շուկան բավականաչափ չի ապահովում ձեռնարկատիրության այն մեխանիզմների գոյությունը, որոնք անհրաժեշտ են գործունեության ոչ ավանդական տեսակների իրականացման համար, քանի որ շուկայական գները չեն արտացոլում իրականության մեջ գոյություն չունեցող ռեսուրսների բաշխման եղանակների շահութաբերությունը: Ընդհանուր հավասարակշռության տեսությունում այս փաստն արհեստականորեն դուրս է հանված այն ենթադրության օգնությամբ, որ շուկաները «կատարյալ» են և ցանկացած ապրանքի համար գոյություն ունի գին: Այսպիսով, ոչ ավանդական գործունեության տեսակներում ներդրումներից փոխհատուցումը բավական մշուշոտ է, և դրա լուծումը դժվարացված է: Այս հիմնախնդիրը Դ.Ռոդրիկը փորձում է ձևակերպել ավանդական տնտեսագիտական տեսության տերմիններով: Ըստ նրա, գոյություն ունեն երկու արտաքին էֆեկտներ, որոնք ճնշում են ապրանքային բազմազանության աճը: Դրանք են տեղեկատվական էքստերնալները և կոորդինացման արտաքին էֆեկտները: Այդ էֆեկտները զսպում են արտադրության դիվերսիֆիկացիան (ապրանքային բազմազանության աճ) և ընդհանրապես այդ աճը դարձնում են անհնար առանց կառավարության նպատակաուղղված միջամտության [15]: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ արտադրության դիվերսիֆիկացիայի առավել նկատելի տեղաշարժեր տեղի են ունեցել կառավարության և մասնավոր բիզնեսի համագործակցության համաձայնեցված գործողությունների արդյունքում, ինչը հաստատվում է ինչպես Արևելյան Ասիայի, այնպես էլ Լատինական Ամերիկայի երկրներում իրականացված կառուցվածքային վերափոխումների փորձով: Ընդ որում, առաջին դեպքում այն իրականացվել է պետության վերահսկողությամբ, իսկ երկրորդ դեպքում՝ ազատ շուկայական ուժերի գործողությամբ: Այս տարբերությունների պատճառն այն է, որ Լատինական Ամերիկայի երկրներում ճյուղային քաղաքականությունն իրականացվել է ոչ

այնքան նպատակաուղղված և հետևողական, որքան Արևելյան Ասիայում: Արդյունքում՝ առաջին դեպքում կերպարանափոխումը շատ ավելի հաջող է ստացվել, քան երկրորդ դեպքում: Ինչպես նշում է Դ.Ռոդրիկը, ոչ ավանդական արտահանման ճյուղերի զարգացման պատմությունն ամբողջ աշխարհում ցույց է տալիս, որ գրեթե երբեք այն տեղի չի ունենում առանց ճյուղային քաղաքականության, պետական ԳՀՓԿԱ-ի (գիտության և գիտահետազոտական ու փորձնական ստորուկտորական աշխատանքներ), ճյուղային աջակցության, արտահանման սուբսիդիաների, խթանող սակագնային քաղաքականության և այլ համանման միջոցների: Նոր ճյուղերից ոչ մեկն իր հաջողության համար պարտական չէ *laissez faire* քաղաքականությանը և շուկայական ուժերի ազատ գործողությանը: Իհարկե, անհնար և անիմաստ է կոնկրետ երկրում կիրառել պետական միջամտության բոլոր գործիքները և մեթոդները: Ավելի կարևոր է սովորել, թե ինչպես կարելի է որոշել այն կոնկրետ բնագավառները, որտեղ միջամտությունն անհրաժեշտ է: Այն կառավարությունները, որոնք գիտակցում են դա, մշտապես կորոնեն կառուցվածքային փոփոխություններին նպաստող եղանակներ և մասնավոր սեկտորի հետ համագործակցությունը պահելու հնարավորություններ: Այնպես որ, ճյուղային քաղաքականությունը նախ և առաջ հոգու վիճակ է [15, p. 38]:

Արդյունաբերական քաղաքականության իրականացման հիմնական առարկությունները

Ըստ Դ.Ռոդրիկի, արդյունաբերական (ճյուղային) քաղաքականության կիրառման դեմ հիմնական առարկությունները հանգում են հետևյալին.

- միջազգային առևտրի ժամանակակից կանոնները հնարավորություններ չեն թողնում արդյունաբերական քաղաքականության իրականացման համար,

- ապացույց չկա, որ արդյունաբերական քաղաքականությունը կարող է հաջողված լինել: Անհրաժեշտ է ոչ թե արդյունաբերական քաղաքականություն, այլ սեփականության իրավունքների պաշտպանություն և համապատասխան «խաղի կանոնների» ապահովում,
- զարգացող երկրներում արդյունավետ արդյունաբերական քաղաքականության իրականացում հնարավոր չէ, քանի որ՝ ա) կառավարություններն ընդունակ չեն կռահել, թե որոնք են պոտենցիալ առումով հաջող ընկերությունները, բ) պետական ապարատը բավարար չափով բանիմաց չէ, որպեսզի ապահովի ճյուղային քաղաքականության արդյունավետ իրականացումը, գ) ճյուղերի զարգացմանը և գործունեությանը պետական միջամտությունը խթանում է կոռուպցիան և «իշխանության գավթումը» [15]:

Դ.Ռոդրիկը նշում է, որ այս փաստարկներից յուրաքանչյուրում կա ճշմարտության բաժին: Միաժամանակ, նա ցույց է տալիս, որ համակողմանի և խոր քննարկման արդյունքում փաստվում է հակառակը:

Այսպես, իր աշխատանքում Դ.Ռոդրիկը մանրամասն վերլուծում է Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կանոնները, առևտրի և ճյուղային քաղաքականության որոշ բնութագրիչների նկատմամբ Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) պահանջները և ցույց տալիս, որ չնայած դրանք նեղացնում են արդյունաբերական քաղաքականության գործիքների հավաքածուն, բայց նայապես չեն վերացնում դրա արդյունավետ կիրառման հնարավորությունները: Միջազգային բազմակողմ, տարածաշրջանային և երկկողմ համաձայնագրերից բխող սահմանափակումների (արտահանման սուբսիդավորում, մտավոր սեփականության պաշտպանություն և այլն) [21] պայմաններում շատ ծրագրեր իսկապես չեն կարող իրականաց-

վել: Այնուամենայնիվ, ճյուղային քաղաքականության անցկացմանն այսօր խոչընդոտում են ոչ թե օբյեկտիվ սահմանափակումները, այլ դրա իրականացման ձգտումը: Միաժամանակ, հարկ է նկատել, որ միջազգային առևտրի ոչ բոլոր սահմանափակումներն են բացասական ազդեցություն ունենում տնտեսության վրա: Օրինակ, կնքվող գործարքների թափանցիկության պահանջներն (դրանք գոյություն ունեն բոլոր առևտրային համաձայնագրերում և միջազգային ֆինանսական կողեքսներում ու ստանդարտներում) ամբողջությամբ համապատասխանում են ճյուղային քաղաքականության սկզբունքներին: Ավելին, գրագետ կազմված տարածաշրջանային առևտրային համաձայնագրերը կարող են նույնիսկ նպաստել ճյուղային քաղաքականության ծրագրերի իրականացմանը: Օրինակ, ԵՄ-ի հետ ազատ առևտրի համաձայնագրերի շրջանակներում Մարոկոյում և Թունիսում ընդունվել են ճյուղային արդիականացման ծրագրեր, որոնց ֆինանսավորման համար միջոցներ են տրամադրել նաև ԵՄ-ը և Համաշխարհային բանկը: Կամ *Mercosur*-ում մտցվել է հատուկ ռեժիմ ավտոմոբիլային ճյուղի համար, ինչը հանգեցրել է ավտոմոբիլների և կոմպլեկտավորող պատրաստվածքների արտադրության բումի Արգենտինայում և Ուրուգվայում: Գրագետ կառուցված ռազմավարության և տնտեսական գերակայությունների համակարգի կառուցման օգնությամբ կառավարությունը կարող է միջազգային, ի սկզբանե սահմանափակող բնույթի, համաձայնագրերը վերածել նպաստավոր հնարավորություններ ապահովող համաձայնագրերի:

Երկրորդ առարկության հետ կապված՝ Դ.Ռոդրիկը նկատում է. «Զարգացող երկրներում դժվար է գտնել առաջադիմող ինդուստրիա, որը չլինի արդյունաբերական քաղաքականության իրականացման արդյունք» [15, p. 17]: Դա իսկապես այդպես է: Ներկայումս զարգացած երկրների տնտեսական հաջողությունները ձեռք են բերվել տնտեսական աճի խթանման շնորհիվ՝ երկարաժամկետ ինդիկատիվ

պլանների շրջանակներում: Փաստ է, որ անցած չորս տասնամյակների ընթացքում աճի առավել բարձր տեմպեր ցուցադրած երկրներն իրականացրել են այնպիսի քաղաքականություն, որը դիտվում է որպես տնտեսական զարգացման արգելակ [22]:

Տարածված կարծիքի համաձայն՝ արագ աճի համար անհրաժեշտ պայման են սեփականության իրավունքի պաշտպանությունը և չկոռումպացված բյուրոկրատիան (այսինքն՝ սկզբում պետք է հաղթահարել կոռուպցիան, իսկ հետո խթանել աճը): Սակայն հարկ է նկատել, որ դեռևս ոչ մի երկրի չի հաջողվել իրականացնել այդպիսի ռազմավարություն: Ոչ մի աղքատ երկրի չի հաջողվել հասնել ինստիտուտների բարձր որակի՝ արագ զարգացման սկզբնական փուլում: Ընդհակառակը, ինստիտուտները բարելավել են արավոր է միայն բարձր տնտեսական աճի ֆոնին: Ճիշտ է, վատ ինստիտուտները, ցածր որակավորված և կոռումպացված բյուրոկրատիան խոչընդոտում են տնտեսական աճին, սակայն աճի ենարավորությունը, այնուամենայնիվ, պահպանվում է, և եթե այն իրացվում է, ապա ինստիտուտների կատարելագործումն ավելի պարզ ինդիք է դառնում [23]: Ինչ վերաբերում է սեփականության իրավունքների պաշտպանությանը, ապա դրանց նույնիսկ իդեալական պաշտպանվածության դեպքում, առանց շուկայի «ձախողումների» վերացման, լայնամասշտաբ կառուցվածքային վերափոխումն անհնար է, և հետևաբար, այդ հարցում պետությունը կոչված է էական դեր խաղալու:

Կառավարությունն իրականում ընդունակ չէ վաղ փուլերում հայտնաբերել հաջողակ ընկերությունները: Դրանց ընտրության հարցում կառավարությունը կարող է սխալվել: Իրականում սխալները («անհաջող նախագծերի ֆինանսավորումը») հաջող ճյուղային քաղաքականության անբաժանելի մասն են կազմում, քանի որ դրան պատասխանելից են քվազի-նորամուծությունների որոնումն ու զարգացումը: Պարտադիր չէ, որ աճի խթանման քաղաքականությունը

նախապես ենթադրի գերակայությունների սահմանում: Այն պետք է հիմնվի ինստիտուտների համակարգի վրա, որն ապահովում է արդյունավետ ռազմավարությունների մշակում պետության, բիզնեսի և հասարակության փոխգործակցության գործընթացում: Տիպիկ կառուցվածքը կարող է ներառել զարգացման պետական խորհուրդը, բիզնեսի ճյուղային ասոցիացիաների համակարգը, արհմիությունները: Ոչ արհեստավարժ կառավարումը և կոռուպցիան ռիսկի լուրջ գործոններ են, և երևի այդ պատճառով էլ կառուցվածքային խնդիրը հաջողվել է լուծել միայն շատ քիչ երկրների: Սակայն բոլոր փուլերում պետության և մասնավոր հատվածի կոոպերացումը և հասարակության աջակցությունը անհրաժեշտ նախապայմաններ են հաջող ռազմավարության համար: Դրան համապատասխան՝ հարկ է, որ պետությունն աճի խթանման ռիսկը բաժանի մասնավոր սեկտորի հետ՝ ներգրավելով նրան համագործակցության մեջ:

Արդյունավետ ռազմավարությունը պետք է լինի ճկուն և ժամանակին նախատեսի ինչպես խթանման նպատակների, այնպես էլ դրանց հասնելու միջոցների փոփոխություն: Այնպես, ինչպես որևէ երկրի տնտեսական և քաղաքական ինստիտուտների փոխապատվաստումն ավելի քիչ զարգացած երկրում սովորաբար հաջողություն չի բերում [24], «ամենաառաջավոր» տնտեսական քաղաքականության փոխառումը հաճախ ճնշում է աճը:

Զարգացող երկրների համար բյուրոկրատական ապարատի բանիմացությունն իսկապես հազվադեպ երևույթ է, բայց դրանց մեծ մասում գոյություն ունեն (կամ կարող են ձևավորվել) հաստատություններ, որտեղ մասնագիտական բանիմացության մակարդակը բավական բարձր է: Ցանկացած դեպքում, անհասկանալի է, թե ինչպես դա կարող է հակասել ճյուղային քաղաքականության իրականացմանը:

Ինչպես եղել է վերջին տասը տարիներին և ինչպես վկայում է կառավարման պրակտիկայում Վաշինգտոնյան կոնսենսուսի

սկզբունքների ներդրման փորձը, շուկայական տնտեսությանն անցման գործընթացում զգալի դեր է հատկացվում պետական կառավարման մարմիններին: Ճյուղային քաղաքականությունը բացառություն չէ: Ճյուղային քաղաքականության ընթացքի վրա կարող են փորձել ազդեցություն ունենալ այն անձինք, որոնց շահերն այն անմիջականորեն շոշափում է: Բայց դա նորից բացառապես ճյուղային քաղաքականության հիմնախնդիր չէ: Շատ երկրներում մասնավորեցումից շահել են (եթե չասենք՝ «յուղոտել» են) մարդիկ, որոնք մոտ են կառավարական շրջանակներին:

Արդյունաբերական քաղաքականությունը՝ որպես մոնետարիզմի այլընտրանք

Կարծես թե ամեն ինչ պարզ է, նորանկախ Հայաստանը՝ որպես զարգացող երկիր, պետք է իրականացներ արդյունաբերական քաղաքականություն: Սակայն Հայաստանում 1990-ական թվականների տնտեսական վերափոխումների հիմքում դրվեցին շուկայական հավասարակշռության նոր դասական տեսության դրույթները (շուկային թերապիայի մոդելի տեսքով), «որոնք քաղաքական ձևակերպում ստացան արմատական լիբերալիզմի գաղափարախոսության մեջ: Ինչպես արդեն նշել ենք, այս տեսության կոնկրետ առաջարկությունները զարգացող երկրների տնտեսական քաղաքականության վերաբերյալ՝ շարադրվել են «Վաշինգտոնյան կոնսենսուս» դոկտրինում: Դոկտրինը նախատեսում է դրամական գանգվածի աճի և բյուջետային կոշտ չափանիշներ՝ մի կողմից, գների և արտաքին առևտրի ազատականացում՝ մյուս կողմից: Արդյունքում՝ շրջափակվում է կառավարության այլ գործողությունների ազատությունը [25]:

Այսպիսով, 1990-ական թվականների սկզբներին Հայաստանն ազատականացրեց իր տնտեսությունը՝ միաժամանակ բացելով այն միջազգային առևտրի և կապիտալի հոսքերի համար և մասնավորեց-

ներով պետական ձեռնարկությունները: Ենթադրվում էր, թե ապակարգավորումը և մասնավորեցումը կօգնեն լուծել կառուցվածքային վերակառուցման և տնտեսական աճի, ինչպես նաև համաշխարհային տնտեսությունում երկրի ընդգրկման հիմնախնդիրները: Այլ կերպ ասած՝ գերիշխող էր «լավագույն արդյունաբերական քաղաքականությունը դրա բացակայությունն է» կարծիքը: Այսինքն՝ ենթադրվում էր, որ շուկայական ուժերն ինքնաբերաբար ձևավորում են տնտեսության ռացիոնալ կառուցվածք: Մակայն այդ քաղաքականությունը հանգեցրեց մեծ կորուստների, որոնք արագ դրսևորվեցին տնտեսական աճի անկման, ինչպես նաև տնտեսության կառուցվածքի ձևախեղման և պարզունակացման տեսքով: Հումքի և նյութերի ներքին գների շուկային ազատականացումը հանգեցրեց համաշխարհայինի հետ դրանց արագ մերձեցմանը, ինչը կրճատեց վերամշակող արդյունաբերության բազմաթիվ ճյուղերի արտադրանքի թողարկման և իրացման ծավալները: Այդ ճյուղերի դիրքերը խարխլվեցին նաև աճող ներմուծման պատճառով: Իսկ արտաքին առևտրի ազատականացումը համապատասխան արտաքին տնտեսական քաղաքականության բացակայության պայմաններում ուղեկցվեց տնտեսական անկախության թուլացմամբ: Մասնավորեցման արդյունքում սեփականությունը բաժանվեց իշխող վերնախավի և քրեական կառուցվածքների միջև, որոնք չդարձան արդյունավետ շուկայական սուբյեկտներ: Այդ փոփոխությունները հանգեցրին նրան, որ տնտեսության իրական հատվածի ներդրումները դարձան անշահավետ, իսկ շահույթի հիմնական մասը (ըստ որոշ գնահատականների՝ մինչև 70-80%) սկսեց կորզվել առևտրի և ֆինանսների ոլորտներում իրականացվող սպեկուլյատիվ գործառնություններից:

Տնտեսական վերափոխումների գլխավոր օբյեկտներ հանդես եկան դրամավարկային, հարկաբյուջետային ոլորտները, որոնց վրա հնարավոր էր ազդել «շուկային թերապիայի» մեթոդներով: Վերափո-

խումբների ընտրված ուղղությունները հիմք են տալիս այդ մոդելը բնութագրել որպես մոնետարիստական: Կարճ մոնետարիզմը կարելի է բնութագրել որպես «փոքր պետության» մոդել, որը ենթադրում է տնտեսությանը պետության նվազագույն միջամտություն:

Չնայած մոնետարիստական քաղաքականությունը հանգեցրեց ֆինանսական կայունության՝ ցածր ինֆլյացիա, էապես ցածր բյուջետային դեֆիցիտ և տնտեսական անկման դադարեցում, բայց այն չլուծեց վերափոխումների հետևանքով առաջացած կառուցվածքային բնույթի հիմնախնդիրները, նույնիսկ խորացրեց դրանք և դրանց դրսևորումներն ու ծնեց նորերը: Հնարավոր է, որ մոնետարիստական մոտեցումները կարող են հաջողությամբ կիրառվել որոշակի տնտեսական կոորդինատների, բայց ոչ թույլ զարգացած կառուցվածքային հավասարակշռության պայմաններում: Կոշտ դրամավարկային և ֆիսկալ քաղաքականության պայմաններում գոյություն ունի ցածր մակարդակում երկրի տնտեսության հավասարակշռության պահպանման «թակարդի» իրական վտանգ: Մոնետարիզմը չի հանդիսանում աճի և զբաղվածության ապահովման քաղաքականություն, այսինքն՝ հենց այն խնդիրների լուծման գործիք, որոնք ավելի հիվանդագին են տնտեսության պարզունակ կառուցվածքի պայմաններում:

Այսպես, կոշտ դրամավարկային քաղաքականությունը հանգեցնում է բարձր տոկոսադրույքների, ինչը լուրջ հիմնախնդիրներ է ստեղծում վարկավորման գործընթացում: Այդպիսի պայմաններում նոր աշխատատեղերի ստեղծումն անհնար է, քանի որ աճի համար անհրաժեշտ կապիտալը պարզապես շատ թանկ է նստում: Եթե հաշվի առնենք նաև գործող ձեռնարկությունների և գյուղացիական տնտեսությունների ցածր շահութաբերությունը, ապա իրական վիճակն ավելի խեղդող է: Հայաստանի Կենտրոնական բանկի ղեկավարությունը հպարտանում է, որ իր քաղաքականությունն ուղղված է առողջ առևտրային բանկերի ստեղծմանը: Սակայն խնդիրը ոչ թե

պարզապես առողջ, այլ այնպիսի բանկերի ստեղծումն է, որոնք վարկավորում են աճը:

Սկսած Ջ.Քեյնսից՝ տնտեսագետներին հայտնի է, որ ավելորդ ֆիսկալ խնայողությունը խեղդում է աճը: Սակայն մոնետարիզմի հայեցակարգի ընդունումից հետո Հայաստանի հաջորդական բոլոր կառավարությունների բոլոր միջոցառումները (հարկային քաղաքականության շրջանակներում) ուղղվեցին բյուջետային դեֆիցիտի առավելագույն կրճատմանը և հարկային համակարգի բյուջետային դերի ավելացմանը: Հայաստանի հարկային համակարգն, ըստ էության, վերածվել է բյուջետային համակարգի կցորդի՝ այդպիսով գրկվելով կարգավորող և սոցիալական գործառույթներից [26]: Այդ համակարգի հիմնական խնդիրը կարճաժամկետ հեռանկարում բյուջեի եկամտային մասի ապահովումն է՝ հարկային բազայի ընդլայնման, հարկային արտոնություններից հրաժարման և տնտեսության գոյություն ունեցող կառուցվածքին հարկային համակարգի հարմարեցման ճանապարհով:

Ինչ վերաբերում է ցածր սղաճի խթաններին, որն էլ հիմնականում շեշտում են մոնետարիստական մոտեցման կողմնակիցները, ապա դրանք կարող են բավարար չլինել տնտեսական աճի և զարգացման համար: Երկիրը կարող է ունենալ ցածր սղաճ, բայց աճի բացակայության և գործազրկության բարձր մակարդակի պայմաններում: Մղաճի դեմ պայքարը Հայաստանի Կենտրոնական բանկի համար կոշտ դրամավարկային քաղաքականության շրջանակներում ընդունվում է որպես ինքնանպատակ (այն ամրագրված է նույնիսկ օրենքով), այն դեպքում, երբ տնտեսագիտությունն ինֆլյացիան դիտում է միայն որպես նպատակին հասնելու միջոց: Վերջին տարիների պրակտիկան ցույց է տալիս, որ նույնիսկ կոշտ դրամավարկային քաղաքականությունը, կառուցվածքային առումով պարզունակ և արտաքին շուկերից խիստ կախված տնտեսության պայմաններում, չի ապահովում շոշա-

փելի արդյունքներ (կենտրոնական բանկը հաճախ չի կարողանում սղաճը պահել կանխատեսված սահմաններում):

Որոշ հեղինակներ (օրինակ, Ռ. Դորնբուշը [27], քեյսականներ և այլն) ցույց են տալիս, որ սղաճը գնագոյացման կայուն համակարգի դեպքում կառավարելի է, եթե ընդհանուր տնտեսության մասշտաբներով չի գերազանցում տարեկան 25-30%-ը: Ավելին, կախված արտադրանքից՝ ճյուղային սղաճի մակարդակը դիֆերենցվում է 1-ից մինչև 100%: Համաձայն լինելով քեյսականության ներկայացուցիչների հետ այն հարցում, որ սղաճը խթանող ազդեցություն է ունենում տնտեսական աճի վրա, ստրուկտուրալիստները միաժամանակ համարում են, որ որոշակի պայմաններում ընդունելի են նաև սղաճի բարձր տեմպերը: Նրանք նշում են, որ տնտեսության առանձին հատվածների զարգացման տեմպերում գոյություն ունեցող տարբերությունների պայմաններում ստեղծվում են անհամամասնություններ, որոնք այդ ոլորտներում կոշտ գների պահպանման դպքում նախաձեռնում են ինֆլյացիոն պայթյուններ: Այդ պատճառով, ստրուկտուրալիստների կարծիքով, հարկ է իրականացնել ակտիվ ներդրումներ հետ մնացող սեկտորներում, վերացնել անհամամասնությունները՝ նույնիսկ դրամական էմիսիայի միջոցով ներդրումների ֆինանսավորման ճանապարհով:

Այսպիսով, տնտեսական քաղաքականության տեսանկյունից հիմնախնդիրն այն է, որ ֆինանսական կայունացումը դրա մոնետարիստական տարբերակով հակասության մեջ է մտնում կառուցվածքային քաղաքականության նպատակների հետ: Իսկ ցածր մակարդակում կառուցվածքային հավասարակշռության պայմաններում, անշուշտ, նեղանում է հարկային բազան, ինչն էապես սահմանափակում է բյուջեի ներդրումային հնարավորությունները:

Հիմնախնդրի լուծումը մեկն է՝ տնտեսությունում պետության դերակատարության ակտիվացում ոչ միայն ֆինանսական կարգա-

վորման ձևով, այլև վերարտադրության պայմանների և գործընթացների վրա ուղղակի ազդեցության ճանապարհով, ինչն անհնար է առանց պետության նպատակաուղղված ջանքերի (կառուցվածքային ներդրումային գործունեության ոլորտում), տնտեսության տեխնոլոգիական առումով առաջադիմական սեկտորների ստեղծման (ներառյալ ԳՀՓԿԱ ոլորտը), «աճի կետերի» նպատակաուղղված աջակցության:

«Վաշինգտոնյան կոնսենսուսի համաձայն՝ արդյունաբերական քաղաքականությունը, որի օգնությամբ պետությունը փորձում է ձևավորել տնտեսության զարգացման ապագա միտումները, սխալ է: Մակայն Արևելյան Ասիայի երկրների կառավարությունները հենց արդյունաբերական քաղաքականությունը դարձրին իրենց պատասխանատվության կենտրոնական կետը: Մասնավորապես, նրանք գտնում են, որ իրենց և ավելի զարգացած երկրների միջև եկամտի տարբերությունը կրճատելու համար անհրաժեշտ է հաղթահարել գիտելիքների և տեխնոլոգիաների միջև տարբերությունը: Այդ հաշվառումով էլ նրանք կառուցել են իրենց կրթական և ներդրումային քաղաքականությունը: Այն դեպքում, երբ Վաշինգտոնյան կոնսենսուսը քիչ ուշադրություն է հրավիրել անհավասարության վրա, Արևելյան Ասիայի երկրներն իրականացրել են անհավասարության կրճատման քաղաքականություն, ինչը նպաստել է հասարակության ինտեգրացիային՝ այդ կերպ ստեղծելով մթնոլորտ, որը նպաստավոր է ներդրումների և աճի համար: Եթե հիմնախնդրին նայենք ավելի լայն, ապա Վաշինգտոնյան կոնսենսուսը դրել է պետության դերը նվազագույնի հասցնելու խնդիրներ, իսկ Արևելյան Ասիայում պետության վրա դրվել է շուկաների ձևավորման օժանդակելու և դրանք կառավարելու խնդիր» [28]:

Հայաստանի ներքին շուկան փոքր է, և այդ պատճառով արտահանման կողմնորոշումն այլընտրանք չունի: Հետևաբար, արտահանման կառուցվածքի բարելավումը ներկայումս Հայաստանի տնտեսու-

թյան ամենալուրջ մարտահրավերն է: Կողմնորոշումը միայն ներքին շուկային և ներմուծման փոխարինումը սահմանափակում են նաև երկրի տեխնոլոգիական զարգացումը, քանի որ ներքին շուկայի փոքր չափերը թույլ չեն տալիս ամբողջությամբ օգտագործել բարձրարտադրողական և թանկարժեք տեխնոլոգիաները: Գլոբալացման ներկա պայմաններում արտահանման ռազմավարությունը վերջին հաշվով ենթադրում է անցում զարգացման նորամուծական ճանապարհի: Այդ պատճառով տնտեսության կառուցվածքը զգալի չափով որոշում է նորամուծությունների բնույթը: Միաժամանակ, նորամուծություններն, իրենց հերթին, կարող են փոխել տնտեսության կառուցվածքը՝ նոր պատրաստվածքների և շուկաների ստեղծման արդյունքում:

Հետևաբար, արտահանմանը կողմնորոշված արդյունաբերական քաղաքականության մշակումը և իրացումը մոնետարիստական քաղաքականության իրական այլընտրանքն են: Արդյունաբերական քաղաքականությունը ոչ միայն պետության տնտեսական քաղաքականության կարևոր մասն է, այլև միաժամանակ ազդում է տնտեսական քաղաքականության մյուս տեսակների վրա:

Արդյունաբերական քաղաքականության առանձնահատկությունները Հայաստանում

Հայաստանի տնտեսության դիվերսիֆիկացիայի կոչերը հրատապության տարբեր աստիճանով հնչեցվել են բազմաթիվ անգամներ և իրենց արտացոլումն են գտել մի շարք պաշտոնական փաստաթղթերում: Հատկանշական է, որ եթե հիմնախնդրի գոյությունն ինչ-որ չափով գիտակցվում է, ապա առայսօր դրան անհրաժեշտ գնահատում չի տրվել: Մյուս կողմից, եթե հիմնախնդրի արդիականության ըմբռնումը որոշակիորեն վերածվել է ֆորմալ ինստիտուտների համակարգի՝ արդյունաբերական քաղաքականության ռազմավարու-

թյան կամ ոլորտային ռազմավարությունների¹ տեսքով, ապա դեռևս չի իմաստավորվել պետության դերակատարությունը կառուցվածքային վերափոխումների քաղաքականության իրականացման առումով: Ավելին, շարունակվում է ֆինանսական կայունության քաղաքականության շրջանակներում անարդյունավետ գործիքների ընտրության պրակտիկան, որը հիմնականում զրկված է կառուցվածքային բաղկացուցից՝ «կառուցվածքային տրամաբանությունից» և «կառուցվածքային մտածելակերպից»:

ՀՀ կառավարության կողմից 2008 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունված Կայուն զարգացման ռազմավարական ծրագրով կանխատեսվում է, որ սկսած 2012թ. անցում կկատարվի արտադրական ներդրումների և գիտելիքի վրա հիմնված տնտեսությանը՝ որպես տնտեսական աճի հիմնական աղբյուր, որը ենթադրում է տնտեսությունում խոր կառուցվածքային տեղաշարժերի իրականացում, ինչպես նաև այդ տեղաշարժերն ապահովող համապատասխան տնտեսական քաղաքականության մշակում և արդյունավետ ներդրում [29]: Նշված փաստաթղթի համաձայն՝ 2012թ. սկսած՝ նախատեսվում է տնտեսական աճը հիմնականում ապահովել արդյունաբերության և ծառայությունների ոլորտի առաջանցիկ զարգացման հաշվին: Սակայն նշված փաստաթղթի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տնտեսական կառուցվածքի փոփոխության վերաբերյալ կառավարության կանխատեսումներն ունեն ընդհանրական և հայտարարագրային բնույթ, հիմնավորված չեն և բավարար պատկերացում չեն տալիս գոյություն ունեցող կառուցվածքային հիմնախնդիրների, ինչպես նաև դրանց լուծման ուղիների վերաբերյալ: Ավելին, պետության դերակատարությունը կառուցվածքային հիմնախնդիրների լուծման հարցում «փոքր պետության» հայեցակարգի շրջանակներում է:

¹ Կառավարության կողմից մշակվել և ընդունվել են տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների, զբոսաշրջության, առողջապահության, կրթության և գյուղատնտեսության ոլորտների զարգացման ռազմավարությունները:

2008-2009թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամը, չնայած բացասական հետևանքներին, հնարավորություն տվեց նաև դասեր քաղել ու ձևավորել տնտեսական քաղաքականության նոր մոտեցումներ: Ստեղծված իրավիճակում ՀՀ կառավարությունը հայտարարեց մի շարք միջոցառումների նախաձեռնության մասին, որոնք, մի կողմից, ուղղված էին ճգնաժամի անմիջական հետևանքների արագ վերացմանը, մյուս կողմից՝ կառուցվածքային խնդիրների լուծմանը և տնտեսության տարբեր ճյուղերում ներդրումային ծրագրերի խթանմանը:

Հակաճգնաժամային միջոցառումները ներառում էին ինստիտուցիոնալ բնույթի և ենթակառուցվածքների կատարելագործման մի շարք միջոցառումներ՝ գործարար միջավայրի բարելավում, հարկային վարչարարության պարզեցում և ԱԱՀ վճարման երկարաձգման հետ կապված որոշակի արտոնություններ, ինչպես նաև «Զվարթնոց» օդանավակայանում և Գյումրիում ազատ տնտեսական գոտիների ստեղծում¹, Ասիական բանկի օժանդակությամբ Հյուսիս-Հարավ ավտոճանապարհի կառուցում, տարածաշրջանային նշանակության նոր էներգետիկ նախագծերի իրականացում և այլն: Ֆորմալ տեսանկյունից նշված միջոցառումների իրականացումը պետությունից չի պահանջել մեծ քաղաքական, տնտեսական և ինստիտուցիոնալ ջանքեր: Իսկ հակաճգնաժամային նախաձեռնություններից կարևորագույններն այդպես էլ մնացին ընդամենը հայտարարությունների մակարդակում: Այսպես, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը ՀՀ Ազգային ժողովում ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծի ներկայաց-

¹ 2012 թվականի ապրիլի 26-ին ՀՀ կառավարությունը՝ ի դեմս ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, և «ՄԻՏՐՈՆԻԿՍ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն կնքեցին պայմանագիր «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքներում ստեղծված ազատ տնտեսական գոտու կազմակերպման մասին: Նախատեսվում է, որ «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքներում ստեղծվող ազատ տնտեսական գոտին կունենա բարձր և նորարարական տեխնոլոգիաների արտադրության և արտահանման ուղղվածություն՝ էլեկտրոնիկայի, ճշգրիտ ինժեներիայի, դեղագործության և բիոտեխնոլոգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, այլընտրանքային էներգետիկայի, արտադրական դիզայնի և հեռահաղորդակցության (տվյալների/ինֆորմացիայի փոխանցման համար տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի և նյութերի նախագծում և արտադրություն) ոլորտներում:

ման կապակցությամբ իր ելույթում հայտարարեց, որ տնտեսական գործընթացներում զգալիորեն բարձրանալու է պետության նախաձեռնողական դերը, իսկ տնտեսական աճին էապես խթանելու է հանրապետության նախագահի կողմից հայտարարված՝ պետական-մասնավոր համագործակցության սկզբունքի ներքո համահայկական ծրագրերի իրականացումը՝ այդ թվում նոր ատոմակայանի և Իրան-Հայաստան երկաթգծի կառուցումը, Համահայկական բանկի և ներդրումային, հիփոթեքային հիմնադրամների ստեղծումը¹: Ակնհայտ է, որ այդպիսի բարդ և մասշտաբային խնդիրների լուծումը, հայտարարություններից և ընդհանուր իստիտուցիոնալ միջոցառումներից գատ, պահանջում է քաղաքական և տնտեսական մեծ ջանքերի գործադրում, այդ թվում տարածաշրջանային մակարդակներում: Քաղաքական ռեալիզմը միջազգային հարաբերությունների համակարգում կառուցվածքային սահմանափակումներ է դնում առանձին պետությունների գործողությունների ազատության վրա և կարծես նրանց համար նախասահմանում է դեր, որից նրանք կարող են հրաժարվել միայն ոչ սովորական ջանքերի գնով, որը կընդգրկի ազգի բոլոր շերտերը («ազգային մոբիլիզացիա»²):

Պետական տնտեսական քաղաքականության առաջնահերթությունների մասին հետաքրքրական պատկեր է տալիս 2009թ. Ռուսաստանի Դաշնության տրամադրած պետական վարկի միջոցների օգտագործման կառուցվածքը: Տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի ընդհանուր 122 մլրդ դրամից շուրջ 37.2 մլրդ դրամն ուղղվեց փոքր և միջին ձեռնարկատիրական (ՓՄՁ) ոլորտի աջակցության ծրագրերին, 30 մլրդ դրամը՝ արտահանում խթանող, մթերող-վերամշակող ընկերությունների, ենթակառուցվածքային ծրագրերի և

¹ Այս նախաձեռնությունների հաջող իրականացումը, իսկապես, կարող է կառուցվածքաստեղծ կարևոր նշանակություն ունենալ Հայաստանի տնտեսության համար:

² Օրինակ, ազգային մոբիլիզացիան կարող է ծավալվել տնտեսությունում հաջող կառուցվածքային վերափոխումների, էլիտաների և քաղաքական ռեժիմի հեղափոխական նորացման, գիտությունում և տեխնիկայում հզոր ձեռքման ֆոնին և այլն:

սպառողական վարկավորմանը և շուրջ 32.5 մլրդ դրամը՝ խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսական վիճակի բարելավմանը, իսկ մնացած գումարը՝ այլ ուղղություններով: Ընդ որում, 32.5 մլրդ դրամով վարկավորված արդյունաբերական ձեռնարկությունները ներկայացնում են էներգետիկայի, մետաղների վերամշակման և հանքարդյունաբերության ոլորտները, այսինքն՝ այն ոլորտները, որոնք Հայաստանի տնտեսության ներկայիս կառուցվածքի հիմքն են: Բացի տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի միջոցներից, ՓՄՁ ոլորտի ֆինանսավորում իրականացվել է նաև այլ աղբյուրներից: Գերմանա-հայկական հիմնադրամի միջոցով իրականացվող ՓՄՁ ոլորտի աջակցության ծրագրերով 2009թ. վարկավորման համար բաշխվել է 18.5 մլրդ դրամ: Վարկավորման այսպիսի կառուցվածքը ցույց է տալիս, որ՝ ա) կառավարությունը շարունակում է ՓՄՁ-ները դիտել որպես տնտեսական հիմնախնդիրների լուծման բանալի ոլորտ, բ) վարկավորման հիմնական ոլորտ են դիտվում ոչ թե գործունեության նոր տեսակները, այլ արդեն գոյություն ունեցող ճյուղերը: *Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ վարկավորման գործընթացները չունեն առաջադիմական կառուցվածքային փոփոխություններ առաջացնելու տրամաբանություն:*

Այնուամենայնիվ, հարկ է նկատել, որ ճգնաժամն ընդգծեց տնտեսության դիվերսիֆիկացման խորացման անհրաժեշտությունը: Այդ տեսանկյունից գործադիրն իր հայտարարություններում սկսեց կարևորել արդյունաբերական ճյուղերի համալիր զարգացումը, առաջին հերթին՝ արտահանելի հատվածի, որի նպատակն է Հայաստանը դարձնել զարգացած արդյունաբերություն ունեցող երկիր: Նշված նպատակի իրագործման համար մշակվել և 2011թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը»: Փաստա-

թուղթը միտված է տնտեսական աճի նոր շարժիչ ուղորտների ձևավորմանն ու զարգացմանը՝ ի հաշիվ ներկայումս արտահանող և արտահանման ներուժ ունեցող ուղորտների զարգացման: Փաստաթղթում նախանշվել են արտահանման տեսանկյունից հեռանկարային 11 ուղորտներ, որոնցից 3-ի (կոնյակագործություն, դեղագործություն, ճշգրիտ ճարտարագիտություն) ուղորտային ռազմավարություններն արդեն իսկ մշակվել են:

«Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության» համաձայն.

- ՀՀ կառավարության կողմից արդյունաբերական քաղաքականության վերաբերյալ որդեգրված է շուկայական ուժերի «անկատարության» վերացմանը կամ չեզոքացմանը, այլ ոչ թե առանձին ձեռնարկությունների համար արտոնյալ պայմաններ ստեղծելուն ուղղված պետական միջամտության սկզբունք: Այսինքն՝ ռազմավարությունը չի նախատեսում գործունեության նոր տեսակների ստեղծմանն ուղղված ուղղակի միջոցառումներ:
- ՀՀ կառավարությունն արդյունաբերական քաղաքականության իրագործումը դիտում է մոնետարիստական հայեցակարգի դրույթների պահպանման շրջանակում, ինչը հակասության մեջ է մտնում կառուցվածքային հիմնախնդիրների լուծման մոտեցումների հետ:
- Արդյունաբերական քաղաքականության ընդհանրական միջոցառումները ներառում են այնպիսի ուղղություններ, որոնք այսպես թե այնպես տարիներ շարունակ իրագործվում են կառավարության կողմից (բարենպաստ արտաքին ռեժիմների ապահովում, ենթակառուցվածքների արդիականացում, օտարերկրյա ներդրումների ներգրավում): Հետևաբար, դրանք ոչինչ չասող դրույթներ են:

- Ներդրումների ներգրավման համար նախատեսվում է մշակել յուրաքանչյուր ոլորտի առանձնահատկությունից բխող առաջատար անդրազգային կորպորացիաների ներգրավմանն ուղղված նախաձեռնությունների փաթեթներ: Մակայն հայտնի չէ այդ ուղղությամբ աշխատանքների երաշխավորվածությունը: Մյուս կողմից, մեզ հայտնի է, թե սովորաբար թույլ զարգացած երկրներում որ ոլորտներն են հոսում օտարերկրյա ներդրումները:
- Հատուկ գործիքները ներառում են հարկային և մաքսային հատուկ ռեժիմներ արտահանող ընկերությունների համար, ներդրումային ապրանքների և ներդրումային ծրագրերի շրջանակում ներմուծվող ապրանքների ԱԱՀ հետաձգում, ազատ տնտեսական գոտիների ստեղծում, ֆինանսական աջակցություն և ֆինանսավորման մատչելիության ապահովում, շուկաների մատչելիությանն ուղղված քայլեր (առևտրային ներկայացուցչությունների բացում, ցուցահանդեսների և համաժողովների կազմակերպում և այլն), կարողությունների զարգացում/մրցունակության բարձրացում (կադրերի վերապատրաստման ծրագրերի համաֆինանսավորում, ընկերություններին ֆինանսական և տեխնիկական աջակցության ցուցաբերում՝ միջազգայնորեն ճանաչված որակի կառավարման համակարգերի ներդրման բնագավառում, տեխնոլոգիաների և գիտելիքի փոխանցմանն աջակցում՝ այդ թվում օգտագործելով նաև Մփյուռքի ներուժը և կապերը), հետազոտությունների և մշակումների խթանում (տեխնոպարկերի և արդյունաբերական պարկերի հիմնում, դրամաշնորհների տրամադրում՝ ընկերությունների և բուհերի համատեղ հետազոտությունների ու մշակումների համար, վենչուրային հիմնադրամների ստեղծում): Նշված միջոցառումների մեծ մասն ինստիտուցիոնալ բնույթի է և կարող է օգտակար լինել արդեն կայացած և արտահանման ներուժ ունեցող ընկերություն-

ների համար: Դրանք նույնպես չեն նախատեսում աջակցություն գործունեության նոր տեսակների ստեղծման համար:

- Նախատեսվում է օժանդակել աճի ներուժ ունեցող այն ոլորտներին կամ ճյուղերին, որոնք վերջին տարիներին ունեցել են ամենամեծ արտահանման ծավալները (ադամանդագործություն, ոսկեգործություն, ժամացույցների արտադրություն, թեթև արդյունաբերություն, կոնյակագործություն), կամ որոնք ծավալային առումով դեռևս չեն գերազանցում \$10 մլն-ը (դեղագործություն և բիոտեխնոլոգիաներ, պահածոների արտադրություն, գինեգործություն, հանքային ջրերի և հյութերի արտադրություն), սակայն ունեցել են դինամիկ աճ, կամ որոնք կարող են նոր շարժիչ ուժ լինել (հիմնականում գիտատար և տեխնոլոգիատար ճյուղեր):

Ինչպես տեսնում ենք, ոլորտների և ճյուղերի ընտրության չափանիշներն ընդհանրական և անորոշ են, դուրս չեն գալիս իներցիոն մոտեցման շրջանակներից:

Արդյունաբերական քաղաքականության նպատակները և առաջնահերթությունները

Արդյունաբերական քաղաքականության էության և նպատակների առումով կարելի է առանձնացնել ճյուղային և ինստիտուցիոնալ մոտեցումները:

Ճյուղային մոտեցման շրջանակներում արդյունաբերական քաղաքականության օրինակներ տարբեր ժամանակներում կիրառել են ԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Շվեդիան, Հարավային Կորեան, Հնդկաստանը, Ճապոնիան և շատ այլ երկրներ: Ճյուղային մոտեցումը ենթադրում է գերակա ճյուղերի և արտադրությունների աջակցություն, ինչպես նաև տնտեսական գործունեության նոր տեսակների ստեղծում: Ավելի ուշ լայն տարածում ստացավ ինստիտուցիոնալ մոտեցումը:

Օրինակ, Վ.Մատն անհրաժեշտ է համարում հրաժարվել ավանդական (ճյուղային) ընկալմամբ արդյունաբերական քաղաքականությունից, այդ թվում ճյուղային առաջնահերթություններից, այս կամ այն ճյուղում ռեսուրսների համակենտրոնացումից, քանի որ դրանք հնարավոր չէ կանխագուշակել և որոշել աճող անորոշության պայմաններում: Այդ պայմաններում առաջին պլան են մղվում այնպիսի գործոններ, ինչպիսին են մարդկային կապիտալը և անձնական բարձրարտադրողական աշխատանքի խթանների ստեղծումը [30]: Մ.Ֆիլատովայի կարծիքով, պետության հիմնական դերը պետք է հանգի տնտեսության այնպիսի ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորմանը, որը նպատակաուղղված կլինի տեխնոլոգիական և ճյուղային վերակառուցման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը [31]: Քանի որ ինստիտուցիոնալ կառուցվածքն ավելի իներցիոն է, քան տեխնոլոգիականը կամ ճյուղայինը, պետության հիմնական խնդիրն արդյունաբերական քաղաքականության բնագավառում պետք է կենտրոնանա ինստիտուցիոնալ կառուցվածք-պլատֆորմի ստեղծման վրա, որն ապահովում է նորամուծությունների և առաջադիմական տեխնոլոգիաների պերմանենտ գեներացումը և դրանց դիֆուզիան կյանքի ամենատարբեր ոլորտներում:

Արդյունաբերական քաղաքականության ինստիտուցիոնալ մոտեցման կողմնակիցները գտնում են, որ միայն ճյուղային սկզբունքով առաջնորդումն արդյունաբերական քաղաքականությունում այսօր նպատակահարմար չէ, քանի որ արագ փոփոխվող տնտեսական և տեխնոլոգիական պայմաններում առաջին պլան են դուրս գալիս արտաքին և ներքին միջավայրին կազմակերպությունների և պետության հարմարվողականության ընդունակությունները: Ճյուղային առաջնահերթություններն աստիճանաբար կորցնում են իրենց նշանակությունը, բացի նրանցից, որոնք կապված են երկրի անվտանգության հետ:

Համադրելով ճյուղային և ինստիտուցիոնալ մոտեցումները՝ Հայաստանի տնտեսության կառուցվածքի կատարելագործման առաջնահերթությունների դիրքերից կարող ենք պնդել, որ.

1. Ճյուղային մոտեցումը կիրառելի է գյուղատնտեսությունում՝ որպես երկրի պարենային անվտանգությունն ապահովող ոլորտ, ինչպես նաև էներգետիկայի և տրանսպորտի ճյուղերում՝ որպես տնտեսական անկախության և կառուցվածքային վերափոխումների համար նախադրյալներ ստեղծող ոլորտներ,
2. Ճյուղային մոտեցումը կիրառելի է նաև պետություն-մասնավոր հատված համագործակցության միջոցով և քվազի-նորամուծական մոտեցման շրջանակներում տնտեսական գործունեության նոր տեսակների ստեղծման դեպքում,
3. մնացած դեպքերում, օրինակ՝ տարածաշրջանային ինտեգրացիայի շրջանակներում արտադրական կոոպերացիայի խթանման տեսանկյունից, կիրառելի է ինստիտուցիոնալ մոտեցումը:

Արդյունաբերական քաղաքականության վերաբերյալ հայացքների միջև սկզբունքային տարբերություններն արտահայտվում են նաև դրա ընտրովիության (սելեկտիվության) կամ ընտրովիության անհրաժեշտ աստիճանի գնահատականներում: Ունիվերսալ միջոցները մարմնավորում են փափուկ, իսկ ընտրանքային միջոցները՝ կոշտ արդյունաբերական քաղաքականությունը: ԵՄ երկրների շրջանակներում կիրառվում են արդյունաբերական քաղաքականության ուղղահայաց և հորիզոնական մոդելներ [32], որոնց համապատասխանում են արդյունաբերական քաղաքականության «կոշտ» և «փափուկ» մոդելները [33]:

Ընտրանքային քաղաքականությունը կապված է առանձին ճյուղերի և գործունեության տեսակների աջակցության հետ դրանց պլանավորման, բյուջետային ֆինանսավորման, հարկային արտոնու-

թյունների, հովանավորչության միջոցով և այլն: Այսինքն՝ ընտրանքային քաղաքականությունը բնութագրական է ճյուղային մոտեցման համար: Ս.Բատչիկովի և Յու.Պետրովի կարծիքով, արդյունաբերական քաղաքականության իմաստը պետության անմիջական սելեկտիվ միջամտությունն է, որի նպատակն է ազգային կառուցվածքային քաղաքականության առաջնահերթությունների իրացումը՝ հիմնված պարզ ձևակերպված ռազմավարական նպատակների և ազգային առավելությունների հստակ որոշման վրա [34]:

Ժամանակակից պայմաններում ընտրանքային արդյունաբերական քաղաքականությունից հրաժարվելու կոչ անողները որպես փաստարկ նշում են հետարդյունաբերական հասարակության կենսագործունեության բոլոր պարամետրերի անորոշության մեծացումը: Առաջին հերթին նշվում է տեխնոլոգիական կյանքի դինամիզմի կտրուկ բարձրացումը, որը պայմանավորում է տնտեսական և տեխնոլոգիական կանխատեսման ժամանակային հորիզոնների կտրուկ նեղացումը: Երկրորդ՝ նշվում է դրանց բավարարման պահանջմունքների և հնարավորությունների աճը (ինչպես ռեսուրսային, այնպես էլ տեխնոլոգիական առումով), ինչն անհատականացնում է ինչպես պահանջմունքները, այնպես էլ տեխնոլոգիական լուծումները և, համապատասխանաբար, բարձրացնում է անորոշության ընդհանուր մակարդակը [35]: Խոսվում է այն մասին, որ հետինդուստրիալ դարաշրջանում տնտեսական կառուցվածքի առաջադիմության մասին պատկերացումներն արագ փոփոխվում են, և այդ դինամիզմը ենթադրում է հրաժարում ճյուղային գերակայություններից, որոնք սահմանվում և աջակցվում են պետության կողմից [36]: Որպես հետևանք, նեղ ժամանակային հորիզոններում և կառուցվածքային գերակայությունների արագ փոփոխման պայմաններում տնտեսական գործակալների ընդունակությունն՝ արագ արձագանքել այդպիսի փոփոխությանը, շատ ավելի կարևոր է ցանկացած ռեսուրսների ցանկացած համակենտրոնացումից [37]: Հաստատվում է, որ ռեսուրսների

համակենտրոնացումը պետության օգնությամբ ազգային նպատակներին հասնելու համար, որ այդքան հաճախ կիրառվում է տարբեր երկրներում ինդուստրիալիզացիայի ժամանակաշրջանում, հիմա կորցնում է իմաստը՝ չես հասցնի համակենտրոնացնել և ծախսել, արդեն կպարզվի, որ ժամանակն է դուրս գրել վնասը: Շուկան և բիզնեսը պետությունից ավելի լավ են որոշում պոտենցիալ աճի կետերը և դրա գործոնները՝ փորձի փոխառումը և ինքնատիպ նորամուծությունները [38]:

Այսօր հաճախ են դիմում Ա.Գերշենկրոնի «Տնտեսական հետամնացությունը պատմական հեռանկարում» [39] աշխատանքին, որտեղ մեծ ուշադրություն է հատկացվում տնտեսական ինստիտուտներին, որոնք ակտիվացնում են ներդրումային գործընթացները և տեխնոլոգիաների փոխառումը: Խոսքը տնտեսական աճի արագացման մասին է ֆիրմաների և բանկերի միջև երկարաժամկետ հարաբերությունների, խոշոր ֆիրմաների և պետության համագործակցության հաշվին, փաստացի երկրի ներսում մրցակցության սահմանափակման գնով:

Պետության կողմից ճյուղային գերակայությունների ձևավորման փորձերը մեկնաբանվում են որպես ֆիրմաների կողմից կապիտալի ներդրման նոր, առավել արդյունավետ և հեռանկարային ուղղությունների ստեղծագործական որոնումը սահմանափակող գործոն: Դա բացատրվում է նրանով, որ ճյուղային գերակայությունների համակարգի կոշտ ձևավորումը միշտ հիմնվում է սոցիալ-տնտեսական զարգացման միտումների վերաբերյալ արդեն գոյություն ունեցող պատկերացումների վրա, այսինքն՝ ելնում է նախորդ փորձից, այլ ոչ թե կողմնորոշվում է ապագային [40]:

Քանի որ տեխնոլոգիական զարգացման ժամանակակից փուլի առանձնահատկություն է դիտվում հեռանկարային սեկտորների ապրիորի որոշման գործնական անհնարիությունը, շեշտը դրվում է

ինստիտուցիոնալ նախադրյալների և մակրոտնտեսական կայունության ապահովման վրա՝ որպես տնտեսական աճի ընդհանուր բազայի [37]:

Նույնիսկ այն դեպքում, երբ ընդունվում է, որ առանց նվազագույն անհրաժեշտ պետական ներդրումների չի հաջողվի տնտեսությունում հասնել ցանկալի կառուցվածքային տեղաշարժերի, ընդգծվում է, որ խոսքը ոչ թե կոնկրետ խոշոր ներդրումային նախագծերի ֆինանսավորման, այլ համեստ մասշտաբներով պետական աջակցության մասին է: Ընդ որում, առաջարկվում է աջակցել այն արտադրանքներին և ֆիրմաներին, որոնք իրենց արդեն դրսևորել են շուկայում, ապացուցել են իրենց մրցունակությունը [41]: Այսպիսով, ֆինանսական աջակցություն կարող են ակնկալել միայն նրանք, ովքեր արդեն հաղթահարել են շուկայի մուտքային արգելքները: Պետության կողմից իր վրա ներդրումային ռիսկի զգալի մասի ընդունումը համարվում է անընդունելի:

Այսպիսով, արդյունաբերական քաղաքականության հիմնարար բնութագրիչը դրա ընտրանքայնության (կամ ունիվերսալության) աստիճանն է: Մի բևեռում կոնկրետ ճյուղերի կամ նույնիսկ ֆիրմաների աջակցությունն է, մյուսում՝ քիչ ընտրանքային միջոցները, այնպիսիք, ինչպիսիք են արժութային կուրսի և հարկային քաղաքականությունները, վարկավորումը, ներդրումները ենթակառուցվածքում, նոր տեխնոլոգիաների յուրացման խրախուսումը՝ ներմուծման և օտարերկրյա ներդրումների ներգրավման համար արտոնյալ պայմանների ստեղծման ճանապարհով: Ընտրանքային միջոցները պահանջում են լավագույն տեղեկացվածություն և ավելի շատ ռիսկային են: Բացի այդ, դրանք ավելի մեծ աստիճանով, քան ունիվերսալ միջոցներից շատերը, խթանում են ռենտայի յուրացումը: Որքան բարձր է անորոշության աստիճանը և ցածր է բյուրոկրատիայի որակը, այնքան ավելի քիչ արդյունավետ է ընտրանքային քաղաքականությունը [42]:

Բայց միայն ունիվերսալ գործիքների միջոցով հնարավոր չէ լուծել արդիականացման մասշտաբային խնդիրները թույլ զարգացած երկրներում, ընտրանքային քաղաքականության պահանջմունքն այնքան ուժեղ է, որքան թույլ են շուկայական ինստիտուտները: Զարգացած տնտեսություններում արդյունաբերական քաղաքականության ընտրանքային գործիքների մեծ մասը կորցնում է նշանակությունը կամ օգտագործվում միայն բացառիկ իրավիճակներում: Սովորաբար զարգացած երկրների կառավարությունները հետևում են «հակացիկլայնության սկզբունքին»՝ տնտեսությանն իրենց միջամտությունն ուժեղացնելով անկման փուլում և թուլացնելով այն բարենպաստ մրցակցության ժամանակաշրջանում, այսինքն՝ օգտագործվում են քեյնսյան դեղատոմսեր: Փաստորեն, քանի որ զարգացած երկրների տնտեսություններին բնորոշ է ցիկլայնությունը, ապա պետական միջամտությունն էլ համընկնում է ցիկլայնության փուլերի հետ, ճգնաժամային և աճի սկզբնական փուլին հատկանշական են սելեկտիվ գործիքները, իսկ աճի խթանման արագացման փուլի ժամանակ՝ ոչ սելեկտիվ միջոցները: Արագացված զարգացման խթանման համար բնութագրական են տնտեսությանը պետության ուղղակի միջամտության փոքրացումը, սելեկտիվ գործիքների փոխարինումը ոչ սելեկտիվներով, ներմուծման և արտահանման ճանապարհին արգելքների աստիճանական իջեցումը, փոքր ձեռնարկությունների աջակցությունը, կապիտալի շուկայի ապակարգավորումը և ներդրումների շեշտադրումը:

Զարգացող երկրներից շատ քչերն են կարողացել հաջողությամբ իրականացնել արդյունաբերական քաղաքականություն և ճիշտ ընտրել գործիքները: Զարգացող տնտեսությունների համար բնութագրական են երկու տիպի սխալներ՝ իներցիայի սխալ, երբ անցյալում հաջողված քաղաքականությունը շարունակում են իրականացնել այնպիսի պայմաններում, որի համար այն պիտանի չէ, և ժամանակից շուտ

միացման սխալ, երբ պետությունը փորձում է կիրառել մեթոդներ և գործիքներ, որոնք արդյունավետ են միայն զարգացած տնտեսությունների պայմաններում: Հայաստանին բնորոշ է հենց վերջին սխալը:

Տարածված է կարծիք, որի համաձայն՝ որքան բարձր է երկրի և նրա շուկայական ինստիտուտների զարգացման մակարդակը, այնքան ավելի քիչ է արդարացվում տնտեսական գործընթացներին պետության ընտրանքային միջամտությունը [43]: Սակայն այս դրույթը ևս ենթարկվում է փաստացի վերանայման՝ հաշվի առնելով հետինդուստրիալ դարաշրջանի առանձնահատկությունները: Այդ դարաշրջանում հետ մնացողներին առաջարկվում է կենտրոնանալ առաջատար երկրների ինստիտուցիոնալ կառուցվածքին արագացված մերձեցման հիմնախնդրի լուծման վրա, ինչը և պետք է պետությանն ազատի արդյունաբերության ոլորտում ընտրանքային բնույթի ռիսկային գործողությունների անհրաժեշտությունից: Զարգացման գերակայություններն առաջարկվում է կապել ինստիտուտների, այլ ոչ թե ճյուղերի հետ [44]: Բայց նույնիսկ հետինդուստրիալ զարգացման համար բնութագրական անորոշության ընդհանուր մակարդակի բարձրացումը չի վերացնում շուկայի դեֆեկտները, այլ, ընդհակառակը, դրանք դարձնում է ավելի շոշափելի: Որքան երկրի զարգացման մակարդակն աճում է, բարձրանում է այն անորոշության աստիճանը, թե հատկապես որ շուկայական դեֆեկտների հաղթահարումն է առավել արդիական, արդյունաբերական քաղաքականության որ միջոցներն են ավելի կիրառելի:

Անորոշությունը հանգեցնում է սխալ որոշումների: Այդպիսի որոշումների կշռի իջեցման համար անհրաժեշտ է խորացնել պետության և բիզնեսի համագործակցությունը: Կողմերից յուրաքանչյուրն ունի իր արժեքավոր տեղեկատվությունը զարգացման դժվարությունների և հեռանկարների մասին (կուտակում է այդպիսի տեղեկատվություն): Տեղեկատվական հնարավորությունների թերազնահատումը

կողմերից յուրաքանչյուրի կողմից հանգեցնում է կորուստների երկու կողմերի համար էլ:

«Մրցունակ արդյունաբերական քաղաքականության մասին» գաղափարը հայտնվել է հենց Արևմտյան Եվրոպայում: Նշելով պետական քաղաքականության հիմնախնդիրների և մեթոդների համընկնելիության գծերն Արևմտյան Եվրոպայում՝ հարկ է նշել պետական արդյունաբերական քաղաքականության հատկապես ակտիվ դերը Հյուսիսային Եվրոպայի երկրներում (Նորվեգիա, Շվեդիա), որոնք իրենց տնտեսական զարգացման առումով որոշ չափով առանձնացել են վերջին հարյուրամյակում Եվրոպայի մնացած մասից: Դրանց ակտիվ արդյունաբերական քաղաքականությունը կարող է դիտվել որպես լրացուցիչ հիմնախնդիրների փոխհատուցման ձև, որ առաջանում են եվրոպական աշխարհամասում հարաբերական առումով «առանձնացված վիճակով» և պայմանավորված են արտահանմանը կողմնորոշված արդյունաբերության հատկապես սուր անհրաժեշտությամբ, ինչը պահանջել է պետության միջինից ավելի մասնակցություն: Հայտնի է, որ Շվեդիան և Նորվեգիան խուսափել են Արևմտյան Եվրոպայի գլխավոր երկրների հետ առևտրատնտեսական միությունների մեջ մտնելուց՝ հաշվի առնելով արտահանման ճյուղերի պետական աջակցությունից կախվածության աստիճանը, առանց որի այդպիսի խմբավորումներում նրանք կգրկվեին առավելություններից:

Եզրակացություններ

1. 1990-ական թվականների սկզբներին միջազգային փորձագետների շրջանում գերիշխող կարծիքի համաձայն՝ բոլոր զարգացող երկրներն իրենց ինստիտուտները պետք է վերակառուցեն, իսկ տնտեսական վերափոխումներն իրականացնեն Վաշինգտոնյան կոնսենսուսի շրջանակներում առաջարկվող միևնույն ունիվերսալ դեղատոմսերի համաձայն: Հետագայում

այդ մոտեցումները հերքվեցին ոչ միայն բազմաթիվ հետազոտողների կողմից, այլև մի շարք երկրների տնտեսական զարգացման փորձով: Չուտ շուկայական մեխանիզմները դադարեցին ընկալվել որպես զարգացած երկրների մակարդակին հասնելու երաշխիք, ավելի հաճախ սկսեցին ուշադրություն դարձնել այդ ճանապարհի վրա գտնվող արգելքներին և ծուղակներին, քննարկել արդյունաբերական քաղաքականության բնույթը:

2. Կառուցվածքային փոփոխությունների ժամանակաշրջանում արդյունաբերական քաղաքականությունը ձեռք է բերում այն կարգավիճակը, որը տրվում է նրան «*industrial policy*» հասկացությամբ, քանի որ հենց այդ ժամանակ է արդյունաբերական քաղաքականությունը նպատակի, օբյեկտի և իրացման եղանակների տեսանկյունից համարվում կառուցվածքային:
3. Ազատ շուկա՞, թե՞ ճյուղային քաղաքականություն երկրնտրանքը 1990-ական թթ. երկրորդ կեսին արևմտաեվրոպական երկրները փորձեցին լուծել «երրորդ ճանապարհի» մշակման միջոցով, ինչը ենթադրում էր պետության և մասնավոր ձեռնարկատիրության ակտիվ դերի համակցում:
4. Ոչ ավանդական ճյուղերի զարգացման պատմությունն ամբողջ աշխարհում ցույց է տալիս, որ դրանցից ոչ մեկն իր հաջողության համար պարտական չէ *laissez faire* քաղաքականությանը և շուկայական ուժերի ազատ գործողությանը: Շուկան ինքն իրեն ընդունակ չէ ժամանակին բացահայտել այն ճյուղերը, որոնց վրա կարելի է հիմնվել ապագայում և արագ կենտրոնացնել անհրաժեշտ ռեսուրսներն այդ ճյուղերի արագացված զարգացման համար: Այլ խոսքով՝ շուկան ի վիճակի չէ անցկացնել տնտեսության արագացված կառուցվածքային վերակառուցում: Դա պետության գործառույթ է, այսինքն՝ տնտեսության կառուցվածքը պետական կարգավորման օբյեկտ է:

5. Թույլ զարգացած երկրներում արդյունաբերական (ճյուղային) քաղաքականության իրականացումը պարզապես անհրաժեշտ պայման է աղքատության և տնտեսության պարզունակ, զարգացման ներուժից զուրկ կառուցվածքը վերափոխելու և դիվերսիֆիկացնելու համար: Զարգացող երկրներում դժվար է գտնել առաջադիմող ինդուստրիա, որը չլինի արդյունաբերական քաղաքականության իրականացման արդյունք: Շատ զարգացող երկրներ, որոնք տնօրինում են ոչ քիչ բնական հարստությունների, մնում են թույլ զարգացածների շարքում հենց այն պատճառով, որ չեն կարողացել ժամանակին որոշել «աճի բևեռները» և դրանց միջև ճիշտ բաշխել ռեսուրսները:
6. Տնտեսության զարգացման հարցում պետական միջամտությունը կարևոր է, բայց այն արդարացվում է միայն այն ժամանակ, երբ միաժամանակ, զարգացման կոնկրետ իրավիճակում, ունի կառուցվածքային վերափոխման կոնկրետ նպատակներ:
7. Բնական կլիմեր, որ նորանկախ Հայաստանը՝ որպես զարգացող երկիր, 1990-ական թթ. սկզբներին իրականացնեք արդյունաբերական քաղաքականություն: Սակայն Հայաստանի կառավարությունը շարժվեց «լավագույն արդյունաբերական քաղաքականությունը դրա բացակայությունն է» սկզբունքով՝ տնտեսական վերափոխումների հիմքում դնելով Վաշինգտոնյան կոնսենսուսի շրջանակներում մշակված շոկային թերապիայի մոդելը: Այլ կերպ այդ մոդելը կարելի է բնութագրել որպես մոնետարիստական կամ «փոքր պետության» մոդել, որը ենթադրում է տնտեսությանը պետության նվազագույն միջամտություն:
8. Մինչև վերջին տարիներն ինստիտուցիոնալ բարեփոխումները չեն ուղեկցվել նպատակաուղղված կառուցվածքային քաղաքականությամբ: Ըստ էության, իրականացվել է ծայրամասային վիճակի հետ հաշտվելու քաղաքականություն:

9. Ներկայումս Հայաստանը փորձում է իրականացնել արտահանմանը կողմնորոշված արդյունաբերական քաղաքականություն, որն իսկապես կարող է դառնալ մոնետարիստական քաղաքականության իրական այլընտրանքը: Մակայն դեռևս ձևակերպված չեն արդյունաբերական քաղաքականության ընդհանուր տեսական և մեթոդաբանական հիմքերը և չկա դրա իրականացման կազմակերպական-կառավարչական կոնկրետ մեխանիզմի և տնտեսական իմաստի ըմբռնումը: Կառավարության կողմից քարոզվող հիմնական մոտեցումները բնորոշ են զարգացած երկրներին, որը չի կարող հանգեցնել էական կառուցվածքային ձեռքբերումների, քանի որ զարգացող երկրների կողմից «ամենաառաջավոր» տնտեսական քաղաքականության փոխառումը սովորաբար հաջողությամբ չի ավարտվում:
10. Ներկայիս արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը հռչակագրային է, չի նախատեսում գործունեության նոր տեսակների ստեղծմանն ուղղված ուղղակի միջոցառումներ, ամփոփված է որոշակի փաստաթղթային ծրագրերում և մեծ մասամբ չունի ֆինանսական ռեսուրսներով ապահովվածություն, իսկ պետության դերը՝ որպես շահագրգռված սուբյեկտի, թերագնահատված է: Ավելին, շարունակվում է ֆինանսական կայունության քաղաքականության շրջանակներում անարդյունավետ գործիքների ընտրության պրակտիկան՝ հակասության մեջ մտնելով կառուցվածքային հիմնախնդիրների լուծման մոտեցումների հետ: Ինչ վերաբերում է ոլորտների և ճյուղերի ընտրության չափանիշներին, ապա դրանք շատ ընդհանրական և անորոշ են, դուրս չեն գալիս ինտերցիոն մոտեցման շրջանակներից:
11. Արդյունաբերական քաղաքականության մոտեցումները, գործիքները և մեթոդները պետք է համարժեք լինեն տնտեսական

քաղաքականության նպատակներին: Ճյուղային մոտեցմանը բնորոշ ընտրանքային (սելեկտիվ) գործիքներն ավելի կիրառելի են տնտեսական անվտանգությունն ապահովող ճյուղերի զարգացման կամ գործունեության նոր տեսակների ստեղծման նախաձեռնման համար: Ինստիտուցիոնալ մոտեցումը կիրառելի է տարածաշրջանային ինտեգրացիայի շրջանակներում արտադրական կոոպերացիայի խթանման տեսանկյունից:

Հուլիս, 2013թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Rodriguez F., Rodrik D.*, Trade and Economic Growth. A Skeptic's Guide to the Cross-National Evidence: CEPR Discussion Paper No 2143, 1999.
2. *Blanchard O.*, The Economics of Post-Communist Transition. Oxford: Clarendon Press, 1997; *Roland G.* Transition and Economics. Politics, Markets and Firms. Cambridge, Mass.: MIT Press, 2000.
3. *Stiglitz J.*, Capital Market Liberalization, Economic Growth, and Instability // World Development. 2000, Vol. 28. No 6. P. 1075–1086.
4. *Rodrik D.*, Growth Strategies. Working draft for eventual publication in the Handbook of Economic Growth. April 2003. (<http://ksghome.harvard.edu/~drodrik.academic.ksg/growthstrat10.pdf>).
5. *Chang H.-J.* Kicking Away the Ladder. Cambridge: Cambridge University Press, 2002.
6. *Polterovich V., Popov V.*, Appropriate Economic Policies at Different Stages of Development (<http://www.nes.ru/english/research/pdf/2005/PopovPolterovich.doc>).
7. *Polterovich V., Popov V.*, Accumulation of Foreign Exchange Reserves and Long Term Economic Growth. 2002. (<http://www.nes.ru/english/about/10th-Anniversary/papers-pdf/Popov-Polterovich.pdf>); *Acemoglu D., Aghion Ph., Zilibotti F.* Distance to Frontier, Selection, and Economic Growth. June 25, 2002 (http://post.economics.harvard.edu/faculty/aghion/papers/Distance_to_Frontier.pdf); *Acemoglu D., Aghion Ph., Zilibotti F.* Vertical Integration and Distance to Frontier. August 2002 (http://post.economics.harvard.edu/faculty/aghion/papers/vertical_integration.pdf).
8. *Полтерович В., Попов В.*, Эволюционная теория экономической политики. Часть первая. Опыт быстрого развития, Munich Personal RePEc Archive, MPRA Paper No. 22168, posted 18. April 2010, <http://mpra.ub.uni-muenchen.de/22168/>

9. *Rodrik D.*, Industrial Policy for the Twenty-First Century: KSG Faculty Research Working Paper 04-047, 2004. Harvard University. (<http://ksghome.harvard.edu/~drodrik/UNIDOSep.pdf>).
10. *Фукуяма Ф.*, Сильное государство: Управление и мировой порядок в XXIв. / Ф. Фукуяма. М.: АСТ: Хранитель, 2006., с. 25.
11. *Татаркин А.*, Структурная перестройка промышленности - как элемент длинно-волнового процесса / А.Татаркин, О.Романова, М.Филатова // Федерализм. 2000. № 4.
12. *Кругман П., Обсфельд М.*, Международная экономика. Теория и практика, М., Экономический факультет МГУ, ЮНИТИ, 1997, с. 277.
13. *Татаркин А.И.*, Промышленная политика как основа системной модернизации экономики России, www.lib.csu.ru/vch/120/001.pdf
14. *Dosi G.*, Evaluating and Comparing the innovation performance of the United States and the European Union / G.Dosi, P.Llerena, M.S. Labini // Expert report prepared for the Trend Chart Policy Workshop 2005. June 29, 2005, p. 36.
15. *Rodrik D.*, Industrial Policy for the Twenty – First Century, Harvard University, september 2004.
16. *Rodrik D.*, The «Paradoxes» of the Successful State // European Economic Review. 1997. Vol. 41. P. 411–442.
17. *Мюрдаль Г.*, Современные проблемы «третьего мира» (Asian Drama), М., Прогресс, 1972.
18. *Jean Imbs and Romain Wacziarg*, «Stages of Diversification» American Economic Review, Vol. 93, No. 1 (Mar., 2003), pp. 63-86.
19. *Ricardo David*, On the Principles of Political Economy and Taxation, third edition, London: John Murray, 1821.
20. *Klinger Bailey, and Daniel Lederman*, Discovery and Development: An Empirical Exploration of «New» Products, World Bank Policy Research Working Paper 3450, November 2004.
21. *Lall, Sanjaya*, «Reinventing Industrial Strategy: The Role of Government Policy in Building Industrial Competitiveness», G-24 Discussion Paper No. 28, april 2004.
22. *Hausman Ricardo and Dani Rodrik*, Economic Development as Self-Discovery. John F. Kennedy School of Government, Harvard University Faculty Research Working Papers Series March 2002, RWP02-023, (http://ssrn.com/abstract_id=313825), p. 2-3.
23. *Полтерович В.М.*, К руководству для реформаторов: некоторые выводы из теории экономических реформ //Экономическая наука современной России, 2005, № 1. С. 7–24.
24. *Полтерович В.М.*, Трансплантация экономических институтов // Экономическая наука современной России, 2001, № 3.
25. *Назарян Г., Егиазарян А.*, О некоторых актуальных проблемах, препятствующих экономическому развитию Республики Армения, Донецкий национальный университет, Проблемы развития внешнеэкономических связей и при-

- влечения иностранных инвестиций: региональный аспект, Часть I, Донецк, 2012, стр. 287 – 291.
26. *Егиазарян А.*, Налоговая политика Армении с позиции экономической безопасности республики, Центральная Азия и Кавказ, издательский дом (Швеция) №5 (11) 2000 г., стр. 186 -199.
 27. *Дорнбуш, Рудигер*, Stabilization, Debt, and Reform: Policy Analysis For Developing Countries, 1993.
 28. *Стиглиц Дж.Ю.*, Глобализация: тревожные тенденции / Пер. с англ. Г.Г. Пирогова, М., Национальный общественно-научный фонд, 2003.
 29. Գլոբալիզացիայի վտանգները և ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշման հավելված:
 30. *Мау В.*, Догоняющая модернизация в современной России // Проблемы теории и практики управления, 2004, № 4, с. 13–16.
 31. *Филатова М.Г.*, Структурная перестройка промышленности: сущность, закономерности, механизм государственного регулирования, Екатеринбург, УрО РАН, 1999.
 32. *Смирнов Е.*, Инновационный вектор промышленной политики Европейского Союза / Е.Смирнов // Междунар. Экономика, 2007, № 2.
 33. Современная национальная промышленная политика России: Сборник материалов. Выпуск 1, М., ИКЦ «Академкнига», 2004, с. 78-86.
 34. *Батчиков С.*, Петров Ю., Промышленная политика в реформационном выборе России // Рос. экон. журн., 1997, № 10, с. 3–12.
 35. *Мау В.*, Посткоммунистическая Россия в постиндустриальном мире: проблемы догоняющего развития // Вопросы экономики, 2002, №7, с. 11.
 36. *Мау В.*, Экономический рост и постиндустриальные вызовы // Проблемы теории и практики управления, 2003, №1.
 37. *Мау В.*, Окна роста и приоритеты экономики // Россия в глобальной политике, том 2, №2, март-апрель 2004.
 38. *Ясин Е.Г.*, Доклад на V Международной научной конференции «Конкурентоспособность и модернизация экономики», Москва, 6 апреля 2004г.; *Ясин Е., Яковлев А.*, Конкурентоспособность и модернизация российской экономики // Вопросы экономики, 2004, №7, с. 6, 24.
 39. *Gershenkron A.*, Economic Backwardness in Historical Perspective: A Book of Essays. - Cambridge, Mass.: The Belknap Press of Harvard University Press, 1962.
 40. Проект Программы социально-экономического развития Российской Федерации на среднесрочную перспективу (2005-2008 годы).
 41. *Ясин Е.Г.*, Доклад Перспективы российской экономики: проблемы и факторы роста (текст доклада), 3-я Международная научная конференция Модернизация экономики России: итоги и перспективы. Москва, 3-4 апреля 2002г.
 42. *Полтерович В.М., Попов В.В.*, Селективные и неселективные инструменты промышленной политики. Глава аналитического доклада, представленного в Минэкономразвития России: *Гринберг Р.С.* и др. Использование финансовых

- государственных инструментов по стимулированию промышленного роста в условиях становления рыночной экономики. ИМЭПИ РАН. 2002. *Тонис А.С.*, Лоббирование и промышленная политика: теоретико-игровой подход. Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук. М.: ЦЭМИ РАН, 2003).
43. *Полтерович В.М., Попов В.В.*, Эволюционная теория экономической политики. Доклад 20 сентября 2005г.
44. *Мау В.*, Экономический рост и постиндустриальные вызовы // Проблемы теории и практики управления, 2003, №1; *Мау В.*, Экономическая политика в 2004 году: поиск модели консолидации роста // Вопросы экономики, 2005, №1.

ПРОБЛЕМЫ И ПРИОРИТЕТЫ ПРОМЫШЛЕННОЙ ПОЛИТИКИ

Ашот Егиазарян

Резюме

Статья посвящена обсуждению основных вопросов промышленной политики. Прежде всего представлены существующие различные трактовки понятия «промышленная политика». При этом из них выделены те, которые более точно характеризуют особенности нынешней ситуации экономики Армении. С точки зрения государственного вмешательства экономики рассматривается следующий вопрос: свободный рынок или отраслевая политика? Также проанализированы основные возражения относительно проведения промышленной политики. Было доказано, что единственной разумной альтернативой монетаризма является промышленная политика. В этой связи представлены основные особенности промышленной политики в Армении, сформулированы ее цели и приоритеты.